

լուծման համար կիրառված մեթոդներով, հետազոտությունների համար օգտագործված արխիվային նյութերով, փաստաթղթերով, մենագրություններով, հուշագրություններով, հոդվածներով, տեղեկատվավերլուծական նյութերով և այլնով:

Աշխատանքի հիմնական դրույթներն ու դրանց եզրահանգումները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում և մի շարք միջազգային գիտաժողովներում թեմայով ունեցած ելույթներում:

Աշխատանքն ունի կիրառական նշանակություն և անցել է համապատասխան ինստիտուցիոնալ փորձաքննություն:

Աշխատանքի կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլխից, 8 ենթագլխից, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 170 էջ:

Ներածությունը

Ներկայացված է գիտական հաշվետվության պահանջներին հարիր և բովանդակային չափորոշիչներին համապատասխան:

Առաջին գլխում հեղինակը խոսել է 20-րդ դարի 90-ական թվականների ռուս-թուրքական ոչ կանոնավոր հարաբերություններում Հայաստանի գոծոնի, ինչպես նաև դրանցում ներգործություն ապահովելու կարևորագույն աշխարհաքաղաքական գործիքակազմի՝ Արցախյան հակամարտության առանձնահատկությունների մասին:

Երկրորդ գլխում Տ. Սաքոյանն անդրադարձել է Հարավային Կովկասում ռուս-թուրքական հարաբերությունները պայմանավորող հիմնական գործոններին, տարածաշրջանում ազդեցության գոտիների բաժանման համատեքստում 2008թ. ռուս-վրացական «Հնգօրյա պատերազմ»-ին, պաշտոնական Անկարայի նորացված քաղաքականությանը, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման խնդրում ներգրավված աշխարհաքաղաքական ինքնուրույն դերակատարների հարաբերություններին:

Երրորդ գլխում դիսերտանտը ներկայացրել է Հայաստանի նշանակալիության հիմնախնդիրը՝ այն արժևորելով ուժերի ռազմաքաղաքական հավասարակշռության ապահովման համատեքստում: Ռուս-թուրքական փոխհարաբերությունների իմաստավորումներում կարևորել է Սիրիայում և Ուկրաինայում առկա ռազմաքաղաքական իրողությունները:

Եզրակացությունները հիմնականում համապատասխանում են ճշմարիտ դատողության սկզբունքներին և օբյեկտ-առարկայական են:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Անշուշտ, Տ. Սաքոյանի երկարամյա գիտաուսուցողական պրակտիկան, պատրաստվածության աստիճանը և տարիքային ցենզն իրենց վճռորոշ ազդեցությունն են ունեցել ներկայացված աշխատանքի ակադեմիական համեմատաբար բարձր որակի, կատարողականի գիտական բարեխղճության վրա: Այնուամենայնիվ, աշխատանքը գերծ չէ թերություններից, որոնցից որպես հիմնական առանձնացնում ենք հետևյալը.

մասնավորապես՝ աշխատանքում ակնհայտ է պատմական իրադարձությունների շղթայական նկարագրությունը, սակայն հարաբերականորեն թույլ են գործընթացների և իրադարձությունների խորքային իմաստավորման համար անհրաժեշտ

